ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ

02.24. 2025թ. **Օձուն բնակավայր**

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Ռուզան Մակինյանը,
- Օձուն բնակավայրի վարչական ղեկավար՝ Ամրաստան Ջանինյանը,
- Տարածքային զարգացման հիմնադրամի մասնագետ՝ Մերի Աբրահամյանը,
- «Արոսա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Խաչատուր Բուդումյանը,
- Նախագծի ՇՄԱԳ փորձագետ՝ Մերի Վարդանյանը,
- Օձուն բնակավայրի դպրոցի տնօրեն՝ Հռիփսիմե Ղուլյանը և ուսուցիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2025թ. փետրվարի 24-ին ժամը 12:00-ին Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Օձուն բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ռուզան Մակինյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակում կատարելիս և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը նախաձեռնողի կողմից լիազոր մարմին մուտք լինելուց հետո, օրենքով և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել է հանրային լսում: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության

դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Այնուհետև Փորձաքննական կենտրոնի մասնագետ **Ռուզան Մակինյանը** ներկայացրեց նախատեսվող գործունեության նպատակը, կառուցապատման տեխնիկական ցուցանիշները՝ նախագծի հետ համեմատելու և տվյալները ճշգրտելու նպատակով, ինչպես նաև շինհրապարակի կազմակերպման աշխատանքները: Մասնագետը ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդցությունների մեղմման վերաբերյալ նախատեսված միջոցառումները, մասնավորապես փոշենստեցման, շինհրապարակում անիվների լվացման հարթակի, աշխատանքների ավարտից հետո տարածքի բարեկարգման և կանաչապատման և այլնի վերաբերյալ:

Ռուզան Մակինյանը հարց բարձացրեց նախատեսվող գործունեության տարածքում առկա էլեկտրահաղորդման ենթակայանի վերաբերյալ:

«Արոսա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Խաչատուր Բուդումյանը պատասխանեց, որ ենթակայանը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից դուրս և ՇՄԱԳ-ում կշտկվի տեխնիկական վրիպակը և հավելեց, որ տարածքում առկա են բոլոր ենթակառուցվածքները:

Օձուն բնակավայրի դպրոցի տնօրեն՝ Հռիփսիմե Ղուլյանը հարցրեց կարող են արդյո՞ք նախագծով նախատեսված նկուղային հարկը օգտագործել որպես ապաստարան:

Խաչատուր Բուդումյանը պատասխանեց, որ նկուղային հարկը կարող է ծառայել որպես ժամանակավոր թաքստոց և այնտեղ նախատեսված են բոլոր կոմունիկացիաները:

Ռուզան Մակինյանը նշեց, որ կոյուղու համար նախատեսված է կենսաբանական մաքրման կայան, որտեղից կոյուղաջրերը մաքրման ենթակվելուց հետո կմղվեն ցամաքուրդային հոր, այնուհետև հարցրեց արդյո՞ք մաքրվող ջուրը համապատասխանում է ոռոգման համար պիտանի ջրի որակին:

Խաչատուր Բուդումյանը պատասխանեց, որ համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների մաքրված ջուրը լիովին համապատասխանում է ոռոգման համար պիտանի ջրի որակին:

Խաչատուր Բուդումյանը նախագիծը ներկայացնելուց հետո նշեց, որ դպրոցի կառուցման աշխատանքների շրջանակներում շինարարական կազմակերպությունը կապահովի ճանապարհային նշանները և գծանշումները:

Ռուզան Մակինյանը հավելեց, որ ավտոմոբիլային ճանապարհի երթևեկության անվտանգությունն ապահովում է ճանապարհները տնօրինող կազմակերպությունը, որ համար պետք դիմել համապատասխան կազմակերպությանը:

Ռուզան Մակինյանը նշեց, որ դպրոցի կանաչապատման նախագիծը համաձայնեցվել է Ալավերդի համայնքի հետ և առաջարկեց դպրոցի շահագործման ընթացքում կանաչ տարածքների խնամքը իրականացնել դպրոցի կողմից:

Առաջարկը ստացավ դրական արձագանք և ընդունվեց մասնակիցների կողմից:

Ռուզան Մակինյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության տարածքում և հարակից մոտակա տարածքերում բացակայում են Կարմիր գրքյան բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև պատմության և բնական հուշարձանները:

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին: Հանրային լսումները լուսանկարահանվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Օձուն վարչական շրջանի աշխատակցի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան

«Արոսա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Խաչատուր Բուդումյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսում

02.24.2025թ.

Հ/հ	Անուն Ազգանուն	Կազմակերպության անվանում/պաշտոն բնակության վայրը	Կոնտակտ. տվյալներ	Ստորագրություն
1.	Մակինյան Ռուզան	«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ փորձագետ	011220217	
2.	[illegible]	[illegible] ՍՊԸ	093 401840	
3.	[illegible]	[illegible]	096 717038	
4.	[illegible]	[illegible] ՍՊԸ	094427523	
5.	[illegible]	[illegible] Օձունի թիվ 2 դպ.	091.06.52.94	
6.	[illegible]	[illegible], Օձունի թիվ 2 դպ.	093718109	
7.	[illegible]	[illegible] Օձունի թիվ 2	093680528	
8.	[illegible]	[illegible] Օձունի թիվ 2 դ.	099060844	
9.	[illegible]	ՊՀԿ, Օձունի թիվ 2 դպրոց	099445571	
10.				
11.	[illegible]	Օձունի թիվ 2 միջն. դպր. տնօրեն	091713300	
12.	[illegible]	Օձունի [illegible]	099-98-56-99	
13.	[illegible]	[illegible]	094808035	
14.	[illegible]	«[illegible]» ՍՊԸ [illegible]	091799272	
15.	[illegible]	[illegible]	(077)756858	
16.	[illegible]	[illegible]	094032362	
17.	[illegible]	Օձունի թիվ 2 դպրոց	077-761660	

18.	Габдрахманов Ирек	Озгек ул. 2 подъезд	093920039	[illegible]
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				
25.				
26.				
27.				
28.				
29.				
30.				
31.				
32.				
33.				
34.				
35.				
36.				
37.				
38.				
39.				
40.				
41.				
42.				